ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2001թ. հունիսի 11-ին կնքված Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև թմրադեղերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության նամակ-համաձայնագրում 9-րդ փոփոխությունը կատարելու մասին

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (ՀՀԿ) և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարությունը (ԱՄՆԿ), (այսուհետ ամեն մեկը անվանվելով "կողմ", իսկ միասին՝ "կողմեր") ելնելով ՀՀ Կառավարության և ԱՄՆ Կառավարության միջև 2001թ. հունիսի 11-ին կնքված Նամակ-համաձայնագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունից, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ԱՄՆ Կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ձեռնարկվող քայլերը և օգտագործվող միջոցները սահմանված են այս փաստաթղթում և հանդիսանում են կողմերի համար հստակ պարտավորություններ: Այս նամակ-համաձայնագրի նպատակները իրականացնելու համար ԱՄՆ-ի կողմից տրամադրած աջակցության տվյալները նշվում են առանձին ֆինանսական փաստաթղթում և կազմում են 2,205.998 ԱՄՆ դոլար: Նշված ծրագրերի հետագա ֆինանսավորումը ԱՄՆԿ կողմից պայմանավորված է համապատասխան մարմինների կողմից հաստատված առկա միջոցների հատկացմամբ, ծրագրային նպատակների ուղղությամբ բավարար առաջընթացով և ԱՄՆ պետքարտուղարության հաստատմամբ:

Լրացուցիչ ֆինանսավորում է տրամադրվում հետևյալ ծրագրերի համար. ֆինանսական դիտարկումների կենտրոնի զարգացում, մշտական իրավախորհրդատուի ծրագիր, քրեափորձագիտական ինստիտուտի զարգացում, մարդկանց առևտրի/թրաֆիքինգի դեմ պայքար, Փրոջեքթ հարմոնիի ԶԱՆԳ, և Ամերիկյան փաստաբանների ընկերակցության իրավունքի գերակայության նախաձեռնության (ԱՓԸ/ԻԳՆ) քրեական իրավունքի բարեփոխումների ծրագիր: Ծրագրերի ամբողջական նկարագրությունը և նպատակները բերված են ստորև՝ II բաժնում:

Կողմերը կարող են գրավոր համաձայնել այս նամակ համաձայնագրի շրջանակներում իրականացվող ծրագրերի ավելացման, փոփոխման կամ կասեցման վերաբերյալ: Այդ ծրագրերը իրականացվում են համաձայն նամակ-համաձայնագրի ժամկետների ու պայմանների:

II բաժնում բերված ծրագրերի նկարագրությունից զատ բոլոր այլ պարտավորությունները, ժամկետներն ու պայմանները, որոնք սահմանվել են 2001թ. հունիսի 11-ին կնքված Նամակ-համաձայնագրում պետք է լինեն կիրառելի և լիովին ուժի մեջ ու գործող:

II. ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

1) Ֆինանսական դիտարկումների կենտրոնի զարգացման ծրագիր – 500.000 ԱՄՆ դոլար

Այս ծրագրի շնորհիվ Ֆինանսական դիտարկումների կենտրոնին (ՖԴԿ) և նրա հետ համագործակցող իրավապահ մարմիններին կտրամադրվի շարունակական ուսումնական և տեխնիկական աջակցություն, այդ թվում՝ ուսուցում տեղեկությունների և ֆինանսական վերլուծության, գործընթացի մշակման հարցերում և իրազեկման արտագնա ծրագրի իրականացում: Աջակցությունը կտրամադրվի ԱՄՆ Գանձապետարանի Տեխնիկական աջակցության գրասենյակի (ՏԱԳ) խորհրդատուների և այլ խորհրդատուների կողմից: Խորհրդատուները կձևավորեն լիովին գործող ֆինանսական դիտարկումների կենտրոն, որը կարող է համագործակցել իր միջազգային գործընկերների հետ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործում:

Ըստ ՏԱԳ առաջարկների կշարունակվի համակարգչային տեխնիկայի և ծրագրային ապահովման ձեռքբերումը, որով կապահովվի միասնական տեղեկատվական ցանցի բոլոր առկա և համապատասխան տեղեկատվական ռեսուրսների միավորումն ու կառավարումը: Համակարգը կընդգրկի տվյալներ ֆինանսական ոլորտի աղբյուրներից, պետական և առևտրային տեղեկատվական բազաներից, իրավապահ տվյալներ, արտաքին տեղեկատվական շտեմարաններից և այլն: Այն կապահովի տեղեկատվական տեխնոլոգիաների միասնական հենք Հայաստանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ ծավալվող գործունեության համար, այնպես որ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մասին տեղեկությունները արագ և մանրակրկիտ վերլուծվեն՝ ստեղծելով անհապաղ կանխարգելող գործողություններ ձեռնարկելու հնարավորություն:

ԱՄՆԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- ուսուցանողների և անհրաժեշտ ուսումնական նյութերի ապահովում,
- տեխնիկական խորհրդատուների ապահովում,
- ԱՄՆԿ տեխնիկական խորհրդատուների կողմից նախանշվող անհրաժեշտ սարքավորումների տրամադրում:

ՀՀԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- դասընթացների անցկացման վայրի և գնված սարքավորումները տեղադրելու համապատասխան տեղամասերի ապահովում,
- ֆինանսական դիտարկումների կենտրոնի աշխատակիցների մասնակցության ապահովում դասընթացներին,
- ԱՄՆԿ տեխնիկական խորհրդատուների և ՀՀԿ համապատասխան պաշտոնյաների միջև հանդիպումների ապահովում:

Արդյունքների չափորոշիչներ.

- իրավապահ մարմինները հետաքննում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործեր՝ հիմնվելով ՖԴԿ-ից ստացված վերլուծությունների վրա,
- տեղեկատվական կառավարման համակարգը գործում է և կապի մեջ է միջազգային իրավապահ տեղեկատվական շտեմարանների հետ,

- փողերի լվացում իրականացնողների նկատմամբ իրականացվում է արդյունավետ քրեական հետապնդում օրենքով սահմանված փողերի լվացման դեմ պայքարի մասին հոդվածներով, անօրինական ֆինանսավորումը կանխվում է:

2) Մշտական իրավախորհրդատուի ծրագիր - 755.998 ԱՄՆ դոլար

Մշտական իրավախորհրդատուն (ՄԻԽ) Արդարադատության դեպարտամենտի Արտասահմանում դատախազության զարգացման, աջակցության և վերապատրաստման գրասենյակի միջոցով կշարունակի նպատակային աջակցություն տրամադրել ՀՀԿ համապատասխան բաղադրիչներին հետևյալ յոթ հիմնական ոլորտներում. 1) աջակցություն քրեական դատավարության օրենսգրքի կատարելագործմանը՝ բարդ գործերի քննության ժամանակ իրավապահ մարմինների հնարավորություններն ընդլայնելու և ԵԽ անդամակցության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ECHR) պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, (2) աջակցություն քրեական դատավարության օրենսգրքի դրույթների լայնամասշտաբ կիրառմանը՝ ողջ երկրի տարածքում անցկացվող գործնական դասընթացների միջոցով, (3) աջակցություն Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) երաշխավորություններին համապատասխանող լավագույն փորձի վրա հիմնված գործողությունների ծրագրի ստեղծմանը, (4) հակակոռուպցիոն գործերի քննության և դրանցով քրեական հետապնդման իրականացման կարողությունների հզորացում՝ համաձայն GRECO-ի շրջանակներում ստանձնած հակակոռուպցիոն պարտավորությունների ներքո, (5) աջակցություն դատախազության ոլորտի բարեփոխումներին՝ ներառյալ ինստիտուցիոնալ կարողությունների և ծառայողական քննությունների զարգացմանը, ինչպես նաև դատախազության ուսումնական կենտրոնի միջոցով պրակտիկ դատախազների համար առավել բարդ գործերով ուսուցման խորացմանը, (6) աջակցություն կոնկրետ գործերով իրավապահ մարմինների և ՖԴԿ միջև համագործակցության խորացմանը և փողերի լվացման գործերի թվի ավելացմանը՝ որպես փողերի լվացման/ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նոր հանցատեսակների առնչությամբ դատախազության և իրավապահ մարմինների կարողությունների զարգացման ավելի լայն ծրագրի մի մաս, (7) աջակցություն քրեական այն գործերի թվի ավելացմանը, որոնցով վարույթն իրականցվելու է և պատիժները նշանակվելու են ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ նոր կոնվենցիային (UNTOC) համապատասխանող հակաթրաֆիքինգային օրենսդրության կիրառմամբ՝ այն հաշվով, որպեսզի կիրառվող պատժամիջոցները համարժեք լինեն տվյալ հանցագործության ծանրությանը:

ԱՄՆԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- աջակցել ՀՀԿ-ին քրեական դատավարության օրենսդրությունում փոփոխություններ կատարելու գործընթացն ավարտին հասցնելու գործում, որն անհրաժեշտ է քննիչներին ու դատախազներին բարդ հանցանքների դեմ պայքարի գործիքներ ապահովելու համար,
- կադրային զարգացում և վերապատրաստում տեղական դատախազների համար, որոնք կունենան համապատասխան պատրաստվածություն քրեական դատավարության նոր օրենսգրքի հետ կապված հմտությունների շարունակական ուսուցում ապահովելու համար,
- ուղղակի աշխատանք Հայաստանի իրավապահների, դատախազների և իրավական հանրության այլ ներկայացուցիչների հետ՝ վերջիններիս դատավարական և

դատարանում հանդես գալու հմտությունների ընդհանուր որակը բարելավելու նպատակով:

ՀՀԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- համապատասխան պետական պաշտոնյաների հետ աշխատելու հնարավորության ապահովում,
- ուսուցանողների ու տեխնիկական խորհրդատուների համար կրթօջախների ու մասնագետների հետ աշխատելու հնարավորություն,
- դասընթացների ներառում ուսումնական հաստատությունների ծրագրերում,
- դասընթացների մասնակիցների ընտրություն, որոնք այդ նպատակով կազատվեն աշխատանքային այլ պարտականությունների կատարումից:

Արդյունքների չափորոշիչներ.

- ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից (օրինակ՝ ԵԽ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից) բխող քրեական դատավարության օրենսգրքի փոփոխությունների նախագծում և ներկայացում ՀՀԿ-ին,
- ՀՀ իրավապահներն ավելի լավ են պատկերացնում գերակա համարվող հանցանքների, ինչպիսիք են մարդկանց թրաֆիքինգը, կոռուպցիան և փողերի լվացումը, քննման ու քրեական հետապնդման հիմնադրույթները, որի ապացույց են հանդիսանում քրեական դատավարության գործիքների արդյունավետ օգտագործումը և դատախազների ու քննիչների թիմային աշխատանքը, և հետագա դրսևորումները այս նոր հիմնարար սկզբունքներն ու եղանակները ամենօրյա աշխատանքում հաջող համակցելու միջոցով:

3) Քրեափորձագիտական ինստիտուտի զարգացման ծրագիր – 200.000 ԱՄՆ դոլար

Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել և արդիականցնել Հայաստանի կարողությունները քրեափորձագիտական ոլորտում՝ հասցնելով դրանք միջազգային ստանդարտներին: Հատկապես, ցանկալի է, որ ՀՀ Փորձաքննությունների ազգային բյուրոն հավատարմագրում ստանա միջազգային հավատարմագրող կազմակերպության կողմից: Այս նպատակին հասնելու համար ծրագիրը կշարունակի ֆինանսավորել ԱՄՆ-ում գտնվող քրեափորձագիտական հարցերով խորհրդատուի պարբերական այցելությունները Հայաստան: Խորհրդատուն տեխնիկական խորհրդատվություն է տրամադրում, մասնավորապես Փորձաքննությունների ազգային բյուրոյի հավատարմագրման համար անհրաժեշտ ընթացակարգերի մշակման նպատակով: Խորհրդատուն նաև առաջարկում և վարձում է մասնագետների առանձին քրեափորձագիտական ոլորտներում (օրինակ՝ ձգաբանական, փաստաթղթաբանական, տոքսիկոլոգիայի և այլն)՝ Հայաստանում Փորձաքննությունների ազգային բյուրոյի աշխատակիցների համար դասընթացներ ապահովելու նպատակով:

Ծրագիրը կմշակի համակարգչային լաբորատոր տեղեկատվական համակարգ՝ Փորձաքննությունների ազգային բյուրոյի աշխատակիցներին աջակցելու համար: Ծրագիրը նաև կձգտի բարձրացնել կազմակերպության արհեստավարժությունը՝ ֆինանսավորելով քրեափորձագիտական հարցերով խորհրդատուի կողմից ընտրված ամերիկյան

տեխնիկական խորհրդատուներին, ովքեր կմշակեն Փորձաքննությունների ազգային բյուրոյում աշխատանքի ընդունելու համար օգտագործվող քրեափորձագիտական ծրագրերը: Ծրագիրը կշարունակի մատակարարել քիմիական նյութեր, սարքավորումներ և սպառողական առարկաներ՝ օժանդակելու Փորձաքննությունների ազգային բյուրոյին համապատասխանել միջազգային չափորոշիչներին և անհրաժեշտության դեպքում կաջակցի վերանորոգման հարցերում:

ԱՄՆԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- ֆինանսավորման հատկացում դասընթացների կազմակերպման, սարքավորումների և տեխնիկական աջակցության համար:

ՀՀԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- Փորձաքննությունների ազգային բյուրոյի ընթացիկ ծախսերի ֆինանսավորում,
- ապահովել դասընթացների անցկացման վայր և ապահովել Փորձաքննությունների ազգային բյուրոյի անձնակազմի մասնակցությունը՝ քրեափորձագիտական հարցերով խորհրդատուի և այլ մասնագետների հետ աշխատելու համար,
- ղեկավար և փորձագիտական կադրերի թափանցիկ ընտրություն՝ կիրառելով արդար ընտրության գործընթաց յուրաքանչյուր դիմորդի որակավորումը որոշելու համար:

Արդյունքների չափորոշիչներ.

- ԱՄՆ-ում գտնվող քրեափորձագիտական հարցերով խորհրդատուն, ինչպես նաև այլ քրեափորձագիտական ոլորտների մասնագետները շարունակում են դասընթացներ անցկացնել Փորձաքննությունների ազգային բյուրոյի անձնակազմի համար,
- Փորձաքննությունների ազգային բյուրոյում հետազոտված իրեղեն ապացույցները շարունակում են որպես հիմք ընդունվել քաղաքացիական և քրեական դատական վարույթներում,
- Փորձաքննությունների ազգային բյուրոն համապատասխանում կամ գերազանցում է միջազգային հավատարմագրման կառույցի կողմից սահմանված հավատարմագրման չափանիշներին վարչական, կառավարման և/կամ որակի ապահովման ոլորտներում:

4) Մարդկանց թրաֆիքինգի և միգրանտների անօրինական շարժի դեմ պայքարի ծրագիր – 300.000 ԱՄՆ դոլար

Այս ծրագրի նպատակն է ուժեղացնել Հայաստանի կարողությունները իրականացնելու համայնքային կանխարգելման ու պաշտպանության ծրագրեր մարդկանց թրաֆիքինգի հնարավոր և փաստացի զոհերի համար և բարելավել թրաֆիքինգին արձագանքելու Հայաստանի երկարաժամկետ ներուժը:

ԱՄՆԿ կֆինանսավորի «Հույս և օգնություն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող թրաֆիքինգի զոհերի պաշտպանությամբ զբաղվող մի ծրագիր: «Հույս և օգնություն» ՀԿ-ն թրաֆիքինգի զոհերին մատուցում է մի շարք ծառայություններ: Կազմակերպությունը ունի ապաստարան զոհերի համար և անվճար թեժ գիծ, որը հասանելի է երկրի բոլոր մասերից: Ապաստարանի աշխատակիցները ապահովում են բժշկական, հոգեբանական և սոցիալական աջակցություն: Իրավաբանական խորհրդատվություն է իրականացվում զոհի համար հետաքննության սկզբնական փուլում և դատական լսումների

ժամանակ, ինչը նաև բարելավում է զոհի և իրավապահների միջև համագործակցությունը: ՀԿ-ն նաև կազմակերպում է մասնագիտական դասընթացներ ապաստարան ուղղորդված անձանց համար: Թրաֆիքինգի զոհերից շատերը չունեն տարրականից բարձր կրթություն. հասարակության մեջ նրանց ինտեգրելու նպատակով ապաստարանը ապահովում է դասընթացներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են վարսահարդարումը, ծաղիկների ձևավորումը, մատնահարդարումը: Դասընթացները հնարավորություն են տալիս զոհերին փող վաստակել և խուսափել սեռական շահագործման ոլորտ վերադառնալուց:

Իրավապահ մարմինները, որոնք պայքարում են Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի և միգրանտների անօրինական շարժի դեմ կստանան շարունակական աջակցություն անհրաժեշտ սարքավորումների, ինչպես նաև միջազգային և տեղացի հակաթրաֆիքինգային փորձագետների կողմից մատուցվող դասընթացների տեսքով: Հայաստանի կառավարությունը կստանա աջակցություն 2010-2012թթ. Հայաստանում Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի մշակման և կիրառման հարցում:

ԱՄՆԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- ֆինանսավորման հատկացում շարունակելու «Թրաֆիքինգի զոհերին աջակցության ծառայություններ» ծրագիրը իրականացնելու համար:

ՀՀԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- ֆինանսավորման հատկացում թրաֆիքինգի զոհերին աջակցության ծառայությունների համար՝ ՀԿ-ների, ինչպիսին է «Հույս և օգնությունը», բեռը թեթևացնելու նպատակով,
- համապարփակ և արդյունավետ 2010-2012թթ. գործողությունների ազգային ծրագրի կազմում, որը իր մեջ կներառի բոլոր հետաքրքրված կողմերի, հատկապես մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում աշխատող ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների առաջարկությունները:

Արդյունքների չափորոշիչներ.

- «Հույս և օգնություն» ՀԿ-ի կողմից կառավարվող ապաստարանի և նրանց կողմից անցկացվող մասնագիտական դասընթացների շնորհիվ մարդկանց թրաֆիքինգի զոհերի կրկնակի զոհ դառնալու ցուցանիշը նվազում է,
- 2010-2012թթ. գործողությունների ազգային ծրագիրը ամփոփված է և կիրառվում է բոլոր հետաքրքրված կողմերի միանձնյա օժանդակությամբ:

5) Փրոջեքթ Հարմոնի, ՋԱՆԳ (Զարգացնենք արդարադատությանը նպաստող գաղափարներ) Հայաստանի իրավական սոցիալականացման ծրագիր– 200.000 ԱՄՆ դոլար

Լինելով Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ աջակցության բյուրոյի կողմից ֆինանսավորվող շարունակական ծրագիր ՋԱՆԳ Հայաստանի իրավական սոցիալականացման ծրագիրը կշարունակի ուշադրության կենտրոնում պահել դպրոցներում իրավական կրթական ուսումնական ծրագիրը և բարձրացնել իրազեկությունը անչափահասների հարցերի շուրջ, ինչպես նաև համայնքային վերականգնողական կենտրոնների ընդլայնումն ու գործարկումը Հայաստանում:

2006 թ. ԶԱՆԳ իրավական ուսումնական ծրագրի ստեղծումից ի վեր, ծրագիրը ներդրվել է 140 ավագ դպրոցներում և 120 միջին դպրոցներում: Փրոջեքթ Հարմոնին սերտ համագործակցում է Ոստիկանության Անչափահասների գործերով բաժնի հետ ծրագրին մասնակցող դպրոցների, ուսուցիչների, համակարգողների և իրավապահների ընտրության հարցում:

ԶԱՆԳ ծրագիրը հիմնել է վեց համայնքային վերականգնողական կենտրոններ Հայաստանի տարբեր քաղաքներում: Այս կենտրոնների նպատակն է խորհրդատվություն տրամադրել առաջին անգամ բռնություն չպարունակող իրավախախտումներ թույլ տված անչափահաս օրինազանցներին՝ միաժամանակ ներառելով նրանց ծնողներին և համայնքի անդամներին: Ծրագիրը նախատեսում է ևս երկու կենտրոնների բացումը, որոնց վայրը կորոշվի հետագայում:

Ի հավելումն այս գործողությունների Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ աջակցության բյուրոյի կողմից տրամադրված գումարները նաև կօգտագործվեն ԱՄՆ-ում գտնվող նմանատիպ խմբերի հետ փորձի փոխանակման այցերը ֆինանսավորման համար և կհիմնվի «Դպրոցական վերականգնողական խորհուրդ» ծրագիրը, որը խրախուսում է դպրոցական խախտումների ու կոնֆլիկտների հարցում հաշվետվողականությունն ու հաշտարարությունը:

ԱՄՆԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- տրամադրել ֆինանսավորում լրացուցիչ միջնակարգ դպրոցներում ԶԱՆԳ-ի միջին դասարանների վերանայված ու ընդլայնված կրթական մոդուլը ներդնելու համար,
- տրամադրել ֆինանսավորում Հայաստանի համայնքներում հավելյալ Համայնքային վերականգնողական կենտրոնների հիմնելու համար, որոնք կզբաղվեն առաջին անգամ բռնություն չպարունակող իրավախախտումներ թույլ տված անչափահասների դաստիարակչական աշխատանքներով,
- տրամադրել ֆինանսավորում համակարգված գործակցային կապերի խորացման համար իրավապահների, անչափահասների ծրագրերի ու համայնքերի միջև:

ՀՀԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- իրավապահների կողմից ծրագրին ցուցաբերվող աջակցության շարունակում,
- դասընթացների անցկացման վայրի տրամադրում,
- տեխնիկական աջակցություն,
- աջակցություն դասընթացների մասնակիցների ընտրության հարցում:

Արդյունքների չափորոշիչներ.

- փորձնական ծրագրի իրականացում ընտրված 10-ը դպրոցներում, որի շրջանակում ոստիկաններ աշխատանքի կանցնեն դպրոցներում,
- ներկայումս մեկ դպրոցում փորձնական իրականացվող «Դպրոցական վերականգնողական խորհուրդ» ծրագրի ընդլայնում և ներդնում Հայաստանի 10-ը դպրոցներում,
- մինչև 2012թ. համայնքային վերականգնողական կենտրոնների քանակը ներկա 6-ից դարձնել 12՝ մեկական Հայաստանի ամեն մարզում:

6) Ամերիկյան փաստաբանների ընկերակցության իրավունքի գերակայության նախաձեռնության (ԱՓԸ/ԻԳՆ) քրեական իրավունքի բարեփոխումների ծրագիր – 250.000 ԱՄՆ դոլար

Ամերիկյան փաստաբանների ընկերակցության իրավունքի գերակայության նախաձեռնությունը կշարունակի տեխնիկական աջակցություն ցուցաբերել քրեական արդարադատության հարցերում Հայաստանի կառավարությանը և իրավական հանրությանը: Ծրագիրը կշարունակի իր աշխատանքը Հանրային պաշտպանի գրասենյակի հետ՝ ուժեղացնելու նրա վարչական հնարավորությունները և կմեծացնի փաստաբանների և հանրային պաշտպանների արհեստավարժությունը համապարփակ ուսումնական ծրագրերի միջոցով: ԱՓԸ/ԻԳՆ նաև կապահովի իրավական խորհրդատվություն Քրեական դատավարության օրենսգրքի և Փաստաբանների մասին օրենքի փոփոխությունների և լրամշակման գործընթացում: ԱՓԸ/ԻԳՆ սերտորեն կհամագործակցի ՄԻԽ-ի և ԱՄՆ դեսպանության այլ գործընկերների հետ, ինչպես նաև միջազգային հանրության ներկայացուցիչների հետ:

Այս ծրագրի ընդհանուր նպատակն է խթանել բարեփոխումները քրեական արդարադատության ոլորտում՝ նպատակ ունենալով ապահովել արդարադատության հավասար հասանելիություն և արդյունավետ իրավական շահերի արդյունավետ ներկայացում: Այս նպատակին հասնելու համար ԱՓԸ/ԻԳՆ-ը սահմանել է հետևյալ հիմնական խնդիրները.

- ուժեղացնել Հանրային պաշտպանի գրասենյակի մասնագիտական և ինստիտուցիոնալ հնարավորությունները՝ դատարանում հանրային պաշտպանի կարիք ունեցող ՀՀ քաղաքացիների իրավունքների պատշաճ ներկայացնելը երաշխավորելու համար,
- բարելավել հանրային պաշտպանների ու փաստաբանների գիտելիքներն ու հմտությունները՝ ուղղված պատշաճ դատական վարույթների ապահովմանը,
- տեխնիկական աջակցություն ցուցաբերել ՀՀ կառավարությանն ու իրավական հանրությանը օրենսդրական բարեփոխումներին ուղղված աշխատանքներում,
- մեծացնել հանրային իրազեկվածության մակարդակը մարդու իրավունքներին վերաբերող հարցերի ու առկա իրավական լուծումների վերաբերյալ:

ԱՄՆԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- ֆինանսավորում Երևանում ԱՓԸ/ԻԳՆ գրասենյակում փորձառու փաստաբանի նշանակելու համար,
- հետևել, որպեսզի ԱՄՆԿ-ի կողմից ֆինանսավորվող փաստաբանը ժամանակին ու ուղղակիորեն տեխնիկական աջակցություն ցուցաբերի ՀՀ կառավարությանն ու Հայաստանի իրավական ու իրավապահ համայնքներին քրեաիրավական զարգացման հարցերի շուրջ:

ՀՀԿ կողմից ձեռնարկվող գործողությունները կներառեն հետևյալը.

- տեղի ապահովում այս ծրագրի շրջանակում կազմակերպվող սեմինարների, խորհրդաժողովների ու դասընթացների համար,
- աշխատանք ԱՓԸ/ԻԳՆ-ի փաստաբանի հետ դասընթացների մասնակիցների հիմնավորված ընտրության համար,

- ԱՓԸ/ԻԳՆ փաստաբանի համար համապատասխան պետական պաշտոնյաների հետ հանդիպելու հնարավորության ապահովում:

Արդյունքների չափորոշիչներ.

- Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից մատուցվող ծառայությունների որակի ու հասանելիության բարելավում, որի ապացույցը կլինի քաղաքացիների իրավունքների պատշաճ ներկայացումը՝ պատշաճ դատական վարույթների և հանրային պաշտպանի կարիք ունեցող քաղաքացիների շահերի ներկայացման ապահովման միջոցով,
- փաստաբանները կիրառում են նոր գործնական հմտություններ ու հիմնավոր իրավական գիտելիքներ,
- քրեական արդարադատության համակարգի առանցքային բարեփոխումների շուրջ ՀՀ քաղաքացիների իրազեկվածության մակարդակի բարձրացում:

III. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության ներկայացուցիչները կհանդիպեն առնվազն տարին մեկ անգամ՝ քննարկելու առաջընթացը, որը նկատվել է ծրագրերի խնդիրների և նպատակների իրականացման գործում: Առաջընթացը կգնահատվի արդյունքի վերոհիշյալ չափորոշիչներին համապատասխան: Գնահատման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը կներառի որակական և քանակական ցուցանիշներ: Հաշվետվությունը կպատրաստվի համատեղ՝ գնահատման արդյունքներն ամփոփելու նպատակով: Գնահատումները կուղեկցվեն ծրագրերի և գործունեության նկատմամբ երկու Կառավարությունների համապատասխան ներկայացուցիչների կողմից ծրագրերի պարբերաբար իրականացվող մոնիտորինգով և նրանց կողմից իրականացվող գործունեությամբ:

IV. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒՄ

Ստորագրումից հետո սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կողմից համապատասխան ներպետական ընթացակարգերը անցնելու մասին Ամերիկայի Միացյալ Նահանգներին ծանուցելու պահից:

Կատարված է Երևան քաղաքում, 2009 թվականի xxx-ին, երկու բնօրինակով, հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության կողմից՝	Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝
_____	_____
Մարի Լ. Յովանովիչ Դեսպան	Աղվան Հովսեփյան Գլխավոր դատախազ